# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
# ՄԱՐՏՈՒՆՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Մարտունի, Շահումյան 2, Հեռ 0262-40005

N 280
*15 հուլիսի 2013թ.*

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

*Հարգելի մարզպետ*

Ուղարկվում է Մարտունի համայնքի ավագանու 02.07.2013թ. կայացած թիվ 5 նիստի հաստատված արձանագրությունը, 16 թերթի վրա:

*ՔԱՂԱՔԱՊԵՏ* *Ե. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Խ.ԽԼՂԱԹՅԱՆ
4-11-56

Գեղարքունիքի մարզպետարան
ԸՆԴՈՒՆՎԱԾ Է
17 07 2013թ
Մուտք թիվ 23/4398-13

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-5

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2-Ը ՀՈՒԼԻՍԻ 2013 Թ. ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ:

*Նիստին մասնակցում էին համայնքի 10 ավագանիներից 6-ը՝ Ա.ՄՈՍՈՅԱՆ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Վ. ՄՀԵՐՅԱՆ, Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Ա. ՄԵԼԻՔՅԱՆ, Ե. ԴԱՎԹՅԱՆ:*

*Նիստը վարում էր քաղաքապետ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ*

*Քարտուղարությամբ՝ Խ. ԽԼՂԱԹՅԱՆԻ:*

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

ՀԱՐՑ -54.« Մարտունու մշակույթի տան տնօրենի պաշտոնում առաջարկվող թեկնածուին համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -55. «Մարտունու քաղաքապետ Բագրատ Հարությունյանին խրախուսելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -56. « Մարտունի քաղաքի Վ. Մամիկոնյան փողոցի ոռոգման ջրատար առուների (երկկողմանի) կառուցման նպատակով ֆինանսական միջոց տրամադրելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -57. «Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող, նախկինում օգտագործված և ապամոնտաժված մետաղական խողովակները աճուրդ - վաճառքի կարգով օտարելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -58. «Մարտունու քաղաքապետարանի վարչական շենքի 4-րդ հարկի դահլիճը կապիտալ վերանորոգելու նպատակով ֆինանսական միջոց տրամադրելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -59. «Մարտունու քաղաքապետարանի վարչական շենքի մուտքը, բակային տարածքը հսկողության տակ պահելու համար, տեսանկարահանող սարքերի ձեռք բերման նպատակով ֆինանսական միջոց տրամադրելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -60. «Մարտունի համայնքի 2013թ. բյուջեում փոփոխություններ կատարելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -61. «Մարտունու քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում փոփոխություն կատարելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -62.«Մարտունի քաղաքի Մյասնիկյան և Երևանյան փողոցների չորացած ծառերը կտրելու համաձայնություն տալու մասին » ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -63.«Մարտունու քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված, շարքից դուրս եկած, հետագա օգտագործման համար ոչ պիտանի գույքերը հաշվեկշռից դուրս գրելու համաձայնություն տալու մասին » ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -64«Մարտունի համայնքի 2013թ. բյուջեի առաջին կիսամյակի կատարման վերաբերյալ քաղաքապետի հաշվետվությունը հաստատելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

ԶԵԿ. Բ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՐՑ -65.«Դիմումների քննարկում »:

ԶԵԿ. Բ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մարտունի համայնքի ավագանին որոշեց հաստատել նիստի օրակարգը՝ կողմ՝ 6, դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանի

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Վ. ԱՀԵՐՅԱՆ

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ե. ԴԱՎԹՅԱՆ

## ՈՐՈՇՈՒՄ N 54
## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«2»-ը Հուլիսի 2013թ.

ք. Մարտունի

«Մարտունու մշակույթի տան տնօրենի պաշտոնում առաջարկված թեկնածուին համաձայնություն տալու մասին» ավագանու որոշում:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 15-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

Համաձայնություն տալ Ռաֆիկ Անուշավանի Հարությունյանի թեկնածությանը, նրան Մարտունու մշակույթի տան տնօրենի պաշտոնում նշանակելու համար:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 6 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ — Ռ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Վ. ՄՀԵՐՅԱՆ

Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ե. ԴԱՎԹՅԱՆ

## *ՈՐՈՇՈՒՄ N 55*
## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«2»-ը հուլիսի 2013թ.

ք. Մարտունի

«Մարտունու քաղաքապետ Բագրատ Հարությունյանին խրախուսելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Հաշվի առնելով Մարտունու քաղաքապետ Բագրատ Հարությունյանի կողմից իր պարտականությունների բարեխիղճ կատարումը, 2013թ. բյուջեի առաջին կիսամյակի կատարողական բարձր ցուցանիշները և ղեկավարվելով «ՀՀ Աշխատանքային օրենսգրքի» 219-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

### *ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
### *ՈՐՈՇՈՒՄ Է*

1. Համաձայնություն տալ, Մարտունու քաղաքապետ Բագրատ Հարությունյանին պարգևատրել ամսեկան դրույքաչափով:

2. Մարտունու քաղաքապետարանի աշխատակազմի բարեխիղճ ու պարտաճանաչ աշխատողների պարգևատրման հարցը թողնել քաղաքապետի հայեցողությանը:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 6 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ
Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ

## ՈՐՈՇՈՒՄ N 56
## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«2»-ը Հուլիսի 2013թ. ք. Մարտունի

«Մարտունի քաղաքի Վ. Մամիկոնյան փողոցի ոռոգման ջրատար առուների (երկկողմանի) կառուցման նպատակով ֆինանսական միջոց տրամադրելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է.

Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասի ազատ մնացորդից 6,0 մլն. (վեց միլիոն) ՀՀ դրամ տեղափոխել <<Ոռոգում>> նախահաշվի (բաժին 04, խումբ 2, դաս 4) 5112 հոդված, Մարտունի քաղաքի Վարդան Մամիկոնյան փողոցի ոռոգման ջրատար առուների (երկկողմանի) կառուցման աշխատանքների համաֆինանսավորման նպատակով:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 6 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Վ. ՄՀԵՐՅԱՆ

Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Ե. ԴԱՎԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ N 57

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«2»-ը Հուլիսի 2013թ. ք. Մարտունի

«Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող, նախկինում օգտագործված և ապամոնտաժված մետաղական խողովակները աճուրդ - վաճառքի կարգով օտարելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի սեփականություն հանդիսացող, նախկինում օգտագործված և ապամոնտաժված մետաղական խողովակները օտարել աճուրդ - վաճառքի կարգով:

2. Մարտունի համայնքի 2013թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ տեղափոխել «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» նախահաշվի 4241 հոդված, ապամոնտաժված մետաղական խողովակների շուկայական արժեքների որոշման մասնագիտական ծառայության գնում կատարելու համար:

3. Գնումը կատարել «Կռունկ» ՍՊԸ-ից:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 6 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝ Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Վ. ՄՀԵՐՅԱՆ

Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Ե. ԴԱՎԹՅԱՆ

## *ՈՐՈՇՈՒՄ N 58*
## ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«2»-ը Հուլիսի 2013թ.

ք. Մարտունի

«Մարտունու քաղաքապետարանի վարչական շենքի 4-րդ հարկի դահլիճը կապիտալ վերանորոգելու նպատակով ֆինանսական միջոց տրամադրելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

## *ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
## *ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասի ազատ մնացորդից 1,5 մլն. (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» նախահաշվի 5113 հոդված, Մարտունու քաղաքապետարանի վարչական շենքի 4-րդ հարկի դահլիճի կապիտալ վերանորոգման նպատակով :

2. Աշխատանքների գնումը կատարել բանակցային ընթացակարգով, առանց հայտարարության հրապարակման:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 6 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ՝ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ
Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ

## ՈՐՈՇՈՒՄ N 59
## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«2»-ը Հուլիսի 2013թ. — ք. Մարտունի

«Մարտունու քաղաքապետարանի վարչական շենքի մուտքը, բակային տարածքը հսկողության տակ պահելու համար, տեսանկարահանող սարքերի ձեռք բերման նպատակով ֆինանսական միջոց տրամադրելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
## ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասի ազատ մնացորդից 800 000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ տեղափոխել <<Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում>> նախահաշվի 5122 հոդված, տեսանկարահանող սարքերի գնում կատարելու համար:

2. Գնումը կատարել բանակցային ընթացակարգով, առանց հայտարարության հրապարակման:

Հարցը քվեարկվեց` կողմ` 6 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ — Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ — Ա. ՍՈՍՈՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հ. ՄՀԵՐՅԱՆ

Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ե. ԴԱՎԹՅԱՆ

*ՈՐՈՇՈՒՄ N 60*
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«2»-ը Հուլիսի 2013թ. ք. Մարտունի

«Մարտունի համայնքի 2013թ. բյուջեում փոփոխություններ կատարելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի 2013թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.
Բյուջեի եկամուտները ավելացնել՝
- Պետական բյուջեից տրվող նպատակային հատկացումներ (ընթացիկ ծախսերի կատարման համար սուբվենցիաներ) - 2 400 000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ
- Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար, պետական բյուջեից ստացվող միջոցներ - 172 270 (մեկ հարյուր յոթանասուներկու հազար երկու հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ

---

ԸՆԴԱՄԵՆԸ ՝ 2 572 270 (երկու միլիոն հինգ հարյուր յոթանասուներկու հազար երկու հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ

1. Բյուջեի ծախսային մասը ավելացնել՝
- << Երաժշտական դպրոցներում ուսուցում>> նախահաշվի (բաժին 09, դաս 1, խումբ 2) 4239 հոդված - 2 400 000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ
- ՔԿԱԳ ծառայության գործունեության կազմակերպում նախահաշվի (բաժին 01, դաս 01, խումբ 1, ծրագիր 3)

ա)4111 հոդված 105600 (մեկ հարյուր հինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ
բ) 4267 հոդված՝ 66670(վաթսունվեց հազար վեց հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ:

2. Մարտունի համայնքի 2013թ. բյուջեի ֆոնդային մասի ազատ մնացորդից 982 000 (ինն հարյուր ութսուներկու հազար) ՀՀ դրամ տեղափոխել.

ա) <<Ճանապարհային տրանսպորտ>> նախահաշվի (բաժին 4, դաս5, խումբ1) 5134 հոդված՝ 732000 (յոթ հարյուր երեսուներկու հազար) ՀՀ դրամ:
բ)<<Միջամարզերի ստեղծում և կանաչապատում>> նախահաշվի (բաժին 05, դաս 6, խումբ 1, ծրագիր 54) 5134 հոդված՝ 250000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

3. Մարտունի համայնքի 2013թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 150000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ տեղափոխել Մարտունու

մշակույթի տան նախահաշվի 4212 հոդված, 2013թ. ընթացքում օգտագործած գազի վարձի վճարման նպատակով:

4. Մարտունի համայնքի 2013թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 1,0 մլն. (մեկ միլիոն )ՀՀ դրամ տեղափոխել <<Մարտունու երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ի 2013թ. << Երաժշտական դպրոցներում ուսուցում>> նախահաշվի (բաժին 09, դաս 1, խումբ 2) 4239 հոդված, լրացուցիչ գնում կատարելու համար:

Հարցը քվեարկվեց` կողմ` 6 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ — Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ա. ՄՀԵՐՅԱՆ

Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Ե. ԴԱՎԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ N 61
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«2»-ը Հուլիսի 2013թ.

ք. Մարտունի

«Մարտունու քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում փոփոխություն կատարելու համաձայնություն տալու մասին>> ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ, 26-րդ կետերի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է.

Համաձայնություն տալ Մարտունու քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում ավելացնել 1 միավոր հանդապահի հաստիք՝ ամսական 32500 (երեսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ աշխատավարձով, 3 ամիս ժամկետով:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 6 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ — Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ — Ա. ՄՈՄՈՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Վ. ՄՀԵՐՅԱՆ
Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ

*ՈՐՈՇՈՒՄ N 62*
<u>ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

«2»-ը Հուլիսի 2013թ. ք. Մարտունի

«Մարտունի քաղաքի Մյասնիկյան և Երևանյան փողոցների չորացած ծառերը կտրելու համաձայնություն տալու մասին » ավագանու որոշումը:

Հաշվի առնելով, որ Մարտունի քաղաքի Մյասնիկյան և Երևանյան փողոցների վրա որոշ ծառեր չորացել են և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*
*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. Համաձայնություն տալ, Մարտունի քաղաքի Մյասնիկյան և Երևանյան փողոցների չորացած ծառերը կտրել:

2. Փողոցների չորացած ծառերի հատումից առաջացած վառելափայտը ակտավորել, պահեստավորել և բաց թողնել քաղաքի սոցիալապես ծանր վիճակում ապրող ընտանիքներին:

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 6 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ՝
Ա. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ
[illegible]. ՄՀԵՐՅԱՆ
[illegible]. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Ա.ՄԵԼԻՔՅԱՆ
Ե. ԴԱՎԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ N 63

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«2»-ը Հուլիսի 2013թ. ք. Մարտունի

«Մարտունու քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված, շարքից դուրս եկած, հետագա օգտագործման համար ոչ պիտանի գույքերը հաշվեկշռից դուրս գրելու համաձայնություն տալու մասին » ավագանու որոշումը:

Հիմք ընդունելով Մարտունու քաղաքապետարանի ամենամյա գույքագրման հանձնաժողովի կողմից կազմված ակտը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Համաձայնություն տալ, Մարտունու քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված, շարքից դուրս եկած, հետագա օգտագործման համար ոչ պիտանի գույքերը, ըստ կից ներկայացվող ցուցակի ոչնչացնել և դուրս գրել քաղաքապետարանի հաշվեկշռից:

2. Քաղաքապետարանում ստեղծված հանձնաժողովի կողմից կազմված դուրս գրման ակտը ներկայացնել քաղաքապետի հաստատմանը, քաղաքապետարանի հաշվեկշռից նշված գույքերը դուրս գրելու համար:

Հարցը քվեարկվեց` կողմ` 6 դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանու անդամներ

Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Վ. ՄՀԵՐՅԱՆ

Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Ե. ԴԱՎԹՅԱՆ

*ՈՐՈՇՈՒՄ N 64*

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«2»-ը Հուլիսի 2013թ. ք. Մարտունի

«Մարտունի համայնքի 2013թ. բյուջեի առաջին կիսամյակի կատարման վերաբերյալ քաղաքապետի հաշվետվությունը հաստատելու համաձայնություն տալու մասին» ավագանու որոշումը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ պարբերության և 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

*ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ*

*ՈՐՈՇՈՒՄ Է.*

Հաստատել Մարտունի համայնքի 2013թ. բյուջեի առաջին կիսամյակի կատարման վերաբերյալ քաղաքապետի ներկայացրած հաշվետվությունը (Կից ներկայացվում է):

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 6, դեմ, ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանի Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Պ. ՄՀԵՐՅԱՆ

Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Ե. ԴԱՎԹՅԱՆ

## ՈՐՈՇՈՒՄ N 65
## ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«2»-ը Հուլիսի 2013թ. ք. Մարտունի

<<Դիմումների քննարկում»:

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

### ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
### ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Մարտունի քաղաքի ներքոնշված քաղաքացիների համար սահմանել գույքահարկի գծով արտոնություն (զիջում).

| հ/հ | ազգանուն, անուն, հայրանուն | գումարը (դրամ) | Անձ. քարտի համարը |
|---|---|---|---|
| 1. | Սահակյան Ժիրայր Ղազարի | 16000 | |
| 2. | Սարգսյան Սիմակ Բեգլարի | 8000 | |
| 3. | Ավետիսյան Արամ Գագիկի | 22500 | |
| 4. | Հարությունյան Մելիք Գուրգենի | 55500 | |

Համաձայնություն տալ, Մարտունի համայնքի 2013 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 4729 հոդվածից, 445000 (չորս հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ որպես օգնություն տրամադրելՄարտունի քաղաքի սոցիալապես վատ վիճակում գտնվող ներքոնշված քաղաքացիներին:

| հ/հ | ազգանուն, անուն, հայրանուն | գումարը /դրամ/ |
|---|---|---|
| 1. | Մովսիսյան Ելենա Սուրենի | 30000 |
| 2. | Աբրահամյան Արևհատ Սարգսի | 30000 |
| 3. | Ավագյան Արմինե Էդվարդի | 30000 |
| 4. | Խաչատրյան Արմեն Ալբերտի | 20000 |
| 5. | Գրիգորյան Ռոնարա Զավենի | 20000 |
| 6. | Մկրտչյան Ֆրունզե Համլետի | 30000 |
| 7. | Խաչատրյան Սոֆիկ Զալիբեկի | 10000 |
| 8. | Հարությունյան Երջանիկ Բագրատի | 25000 |
| 9. | Օհանյան Սեդա | 30000 |
| 10. | Մնացականյան Անահիտ | 30000 |
| 11. | Իսրաելյան Սոֆյա | 20000 |
| 12. | Բաղդասարյան Թամարա Ժորժիկի | 20000 |

| | | |
|---|---|---|
| 13. | Կարապետյան Ռուզաննա | 30000 |
| 14. | Համբարձումյան Ռուզաննա | 25000 |
| 15. | Թաթոյան Ֆրիդոն | 20000 |
| 16. | Բարսեղյան Նարինե Հուսիկի | 25000 |
| 17. | Բարսեղյան Մայիս Ռուբենի | 20000 |
| 18. | Մարգարյան Էմմա Գառնիկի | 15000 |
| 19. | Գրիգորյան Ժորժիկ Հակոբի | 15000 |
| | Ընդամենը | 445000 |

Հարցը քվեարկվեց՝ կողմ՝ 6 ձեռնպահ չկա:

Մարտունու քաղաքապետ — Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Համայնքի ավագանիներ — Ա. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Վ. ՄՀԵՐՅԱՆ

Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ա.ՄԵԼԻՔՅԱՆ

Ե. ԴԱՎԹՅԱՆ